

PEARLS OF ARMENIAN HERITAGE

ԿԱՆԱՀ ԿԻՐԱԿԻ

Կանաչ Կիրակի կը յիշատակէ Երուսաղէմի մէջ առաջին Քրիստոնէական Եկեղեցոյ հաստատումը, ուր Քրիստոս հանդիպեցաւ Առաքեալներուն վերնատան մէջ: «Կանաչ Կիրակի» անուանումը թերեւս կապ ունի գարնան եղանակին հետ: Այսօրուայ Սուրբ Պատարագին ընթացքին սովորութիւն դարձած է եկեղեցին զարդարել կանաչով եւ քահանաները կանաչով կը զգեստաւորուիլ:

Անգլերէնին մէջ գոյութիւն ունի մէկ արտայայտութիւն՝ «Տեսնելը հաւատալ է»: Այս կը նշանակէ թէ մարդ միայն կը հաւատայ այն բաներուն, որոնք աչքերով կ'տեսնէ: Սակայն Քրիստոս մեզի ուրիշ ձեւով կը սորվեցնէ հաւատքը: Հաւատալ կը նշանակէ ապրիլ մեր հաւատքով, ոչ միայն դիտել կամ մտածել: Հայերու եւ ընդհանրապէս բոլոր Ուղղափառ Քրիստոնեաներուն համար հաւատքը միայն մտքի գործ չէ կամ պարզ արտայայտութիւն մը չէ, այլ՝ ամբողջ ապրելակերպ մըն է:

Այսօրուայ Սուրբ Աւետարանի ընթերցումին մէջ, Յիսուս կ'ըսէ թէ ով իրեն հաւատայ՝ յափտենական կեանք կ'ունենայ (Յովհաննէս 3.16): Բայց ի՞նչ կը նշանակէ հաւատալ: Կը նշանակէ կեանք ապրիլ մեր հաւատքին համաձայն՝ օգնելով կարիքաւորներուն, պաշտպանելով բարեկամներն ու այլոց հալածողներէն, առանց ամօթխածութեան աղօթելով, եկեղեցի երթալով եւ Սուրբ Հաղորդութիւն ստանալով:

Դիւրին չէ այս աշխարհի մէջ ապրիլ ու ցոյց տալ մեր հաւատքը, որովհետեւ աշխարհի մտածողութիւնը յաճախ հակասած է մեր հաւատքին: Մարդիկ կրնան մեզ ծաղրել, անուանել մեզի տարօրինակ, կամ փորձել համոզել, որ չհաւատանք Յիսուսին: Բայց Յիսուս խոստացած է միշտ մեզի հետ ըլլալ եւ մեզի յափտենական կեանք պարգեւել:



Ինչպէ՞ս կրնաս այս շաբաթը ցոյց տալ քու հաւատքդ ու հաւատարմութիւնդ Յիսուսին:

Ի՞նչ կրնաս փոխել կեանքիդ մէջ, որպէսզի մարդիկ ձանձնան, որ Քրիստոնեայ ես:

Եղե՞լ է պահ մը, երբ զգացած ես Աստուած քու հետդ էր, երբ կարիքի մէջ էիր: